9. Աշխատակիցը պարտավոր է իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնում գործունեության և այլ ոլորտներում առկա հանգամանքների վերաբերյալ քննադատական մտահոգություններ արտահայտելիս լինել հարգալից և զուսպ:
10. Աշխատակիցը պարտավոր է խուսափել հանրային ծառայությունը վարկաբեկելուց կամ նսեմացնելուց:
11. Աշխատակիցը պարտավոր է չօգտագործել զբաղեցրած պաշտոնն իր, այլ անձանց կամ մասնավոր կազմակերպությունների համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:

## ԲԱԺԻՆ 5. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատակիցը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն՝ բացառությամբ օրենսդրությամբ և հանրային իշխանության տվյալ մարմնի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի:
2. Աշխատակիցը պարտավոր է հանրային իշխանության այլ մարմինների հետ գործողությունները համակարգելիս և համագործակցելիս գործել թափանցիկ, ինչպես նաև պատշաճ կերպով արձագանքել առաջացած խնդիրներին:
3. Աշխատակիցը պարտավոր է բացառել չճշտված, իրականությանը չհամապատասխանող և ապակողմնորոշող տեղեկությունների տրամադրումը, այլ հանրային ծառայողներից չպահանջել նման տեղեկությունների տրամադրում:
4. Աշխատակիցը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված հարցումներին ի պատասխան

Օրենքով սահմանված կարգով ներկայացնել պարզաբանումներ և լրացուցիչ նյութեր՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի ստուգման և վերլուծության նպատակով:
5. Աշխատակիցը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում և կարգով ապահովել հանրության մասնակցությունը որոշումների կայացման հարցում:

## ԲԱԺԻՆ 6. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

1. Աշխատակիցը իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է խուսափել այնպիսի գործողության կատարումից կամ որոշման կայացումից, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես ուղղակի կամ անուղղակի անձնական շահով կամ Օրենքի իմաստով՝ իր հետ փոխկապակցված անձի շահով առաջնորդվել:
2. Եթե Աշխատակցի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման, ապա հանրային ծառայողը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս անձ կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հայտարարություն ներկայացնել շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին: Նախքան վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի գրավոր հանձնարարություն կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից առաջարկություն ստանալը՝ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ հարցի վերաբերյալ որևէ գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց:
3. Աշխատակիցը պարտավոր է իր լիազորությունները կատարելիս խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում ծառայողը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարելու իր պարտականությունները:
4. Աշխատակիցը պարտավոր է խուսափել այնպիսի գործառույթներ ստանձնելուց, որոնց իրականացման ընթացքում կանխատեսելի կլինեն հաճախակի շահերի բախման իրավիճակներ:
5.Աշխատակիցը պարտավոր է չտալ ոչ օբյեկտիվ երաշխավորություններ կամ չանել միջնորդություններ իրեն կամ որևէ այլ անձին հանրային ծառայության պաշտոնի նշանակելու, առաջխաղացման, պաշտոնեական կարգավիճակի բարելավման և այլ հարցերով, ինչպես նաև չդրդել որևէ մեկին նման երաշխավորություններ տալ կամ միջնորդություններ անել:

## ԲԱԺԻՆ 7. ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ

1. Աշխատակիցը պարտավոր է զերծ մնալ Օրենքի իմաստով ոչ թույլատրելի նվեր ընդունելուց կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե նման նվերը ողջամտորեն չէր տրամադրվի հանրային ծառայողը չհանդիսացող անձի:
2. Աշխատակիցը պարտավոր է զերծ մնալ ոչ նյութական առավելություն ընդունելուց, եթե կարող է ընկալվել, որ դա կարող է ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա: Ոչ նյութական առավելություն կարող է լինել, օրինակ, արտոնյալ դիրքը կամ բարիքներից արագ օգտվելու հնարավորությունը, ինչի դեպքում դրանց դրամական արժեքն ակնհայտ չէ:
3.Աշխատակիցը պարտավոր է բոլոր դեպքերում, բացառությամբ՝ սահմանված շեմը չգերազանցող արժեք ունեցող թույլատրելի նվերների, վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ ոչ նյութական առավելության մասին:

## ԲԱԺԻՆ 8. ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատակիցը պարտավոր է հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և պետական լեզուն, ինչպես նաև պետական մարմինների՝ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խորհրդանիշներն ու տարբերանշանները:
2. Աշխատակիցը պարտավոր է զերծ մնալ ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից, պետական մարմինների՝ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խորհրդանիշներից ու տարբերանշաններից, լիազոր մարմինների կողմից ընդունված արարողակարգային խորհրդանիշներից և տարբերանշաններից, օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ պետությունների պետական խորհրդանիշներից, միջազգային կառույցների հետ հանդիպումների ընթացքում՝ այդ կառույցների խորհրդանիշներից ու տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշի կամ տարբերանշանի ցուցադրումից:
3. Աշխատակիցը պարտավոր է հարգել այլ հանրային ծառայողների և հասարակության բոլոր անդամների արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները:
4. Աշխատակիցը պարտավոր է ցանկացած պայմաններում և իրավիճակներում իր գործողություններով, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով զերծ մնալ հանրային ծառայության հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, հանրային ծառայության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ հանրային ծառայողի անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց:

## ԲԱԺԻՆ 9. ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատակիցը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս՝ այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս, ներկայանալ՝ հայտնելով անունը, ազգանունը, և այն մարմինը, որը ներկայացնում է՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
2. Աշխատակիցը պարտավոր է ի պաշտոնե հաղորդակցության բոլոր միջոցներն օգտագործելիս, ցանկացած իրավիճակում ցուցաբերել զսպվածություն, հավասարակշռվածություն և հարգալիրություն:
3. Աշխատակիցը պարտավոր է գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը:
4. Աշխատակիցը պարտավոր է գործընկերների և պետական այլ մարմինների աշխատակիցների հետ հարաբերվելիս լինել նրբանկատ, զուսպ, հարգալից, բարեկիրթ, չխոչընդոտել այլ հանրային ծառայողների աշխատանքային պարտականությունների կատարմանը:
5. Աշխատակիցը պարտավոր է զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված հանրային ծառայության համակարգում այդ անձի ունեցած պաշտոնով:
6. Աշխատակիցը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել, ինչպես նաև չգործադրել հոգեբանական բռնությունն և այլ սպառնալիքներ չներկայացնել:
7. Աշխատակիցը պարտավոր է աշխատանքի ներկայանալ պատշաճ տեսքով, պահպանել արտաքին տեսքին ներկայացվող՝ տվյալ մարմնի կողմից սահմանված կանոնները:
8. Աշխատակցին արգելվում է թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր օգտագործել, բացառությամբ՝ օրինական բժշկական նպատակներով օգտագործման կամ ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվել:

9. Աշխատակցին արգելվում է աշխատանքի վայրում ծխել՝ բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների, ինչպես նաև խախտել հրդեհային անվտանգության և սանիտարական նորմերն ու կանոնները:
10. Աշխատակիցը պարտավոր է զերծ մնալ ցանկացած տեսակի, ոտնձգության դրսևորումներից կամ նման տպավորություն ստեղծելուց:

## ԲԱԺԻՆ 10. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐՈՎ

1. Աշխատակիցը պարտավոր է պաշտոնական հարցազրույց տալիս կամ հաղորդակցվելիս պահպանել իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնի կանոնները, հաղորդակցության ռազմավարությունը, ուղենիշները, որոշումները և պաշտոնական դիրքորոշումը:
2. Աշխատակիցը պարտավոր է հարգել հանրության իրազեկմանն ուղղված զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում աջակցել նրանց սահմանված կարգով հավաստի տեղեկություններ ստանալու հարցում:
3. Աշխատակիցը պարտավոր է սոցիալական ցանցերում չկատարել որևէ գրառում կամ մեկնաբանություն, չհավանել կամ չտարածել գրառումներ, որոնք կարող են վնասել, նսեմացնել կամ այլ եղանակով արատավորել հանրային ծառայության հեղինակությունը:
4. Աշխատակիցը պարտավոր է սոցիալական ցանցերում չմեկնաբանել, չքննադատել, չքննարկել իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնի գործառույթները, որոշումները, գործունեությանն առնչվող խնդիրները և իրավական հարցերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է ի պաշտոնե իրականացվող գործառույթներից ինչպես նաև դրանց վերաբերյալ չտարածել ոչ պաշտոնական լուրեր:
5. Աշխատակիցը պարտավոր է խուսափել սոցիալական ցանցերում անձնական այնպիսի լուսանկարներ և տեսագրություններ հրապարակելուց, որոնք կարող են հանրային ծառայությունը վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ:

## ԲԱԺԻՆ 11. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

1. Աշխատակիցը պարտավոր է պահպանել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի և նյութերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները:
2. Աշխատակիցը պարտավոր է այլ նպատակներով չօգտագործել, չհրապարակել կամ այլ կերպ մատչելի չդարձնել (այդ թվում՝ պաշտոնից ազատվելուց հետո) պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,, իսկ նման տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում՝ անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր վերադաս անձին, անմիջական ղեկավարին կամ գաղտնի տեղեկությունների պահպանությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին:
3. Աշխատակիցը պարտավոր է պատշաճ կերպով և գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և անվտանգության կանոնները պահպանելով՝ մշակել և տնօրինել պաշտոնեական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված իր տնօրինության տակ հայտնված տվյալները, տեղեկությունները, գաղտնաբառերը և այլն:
4. Աշխատակիցը պարտավոր է ձեռնպահ մնալ իր լիազորությունների կատարման հետ չառնչվող պետական կամ ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց թույլտվության դրանց տեղեկակիրների պատճենահանումից, ձայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից:
5. Աշխատակիցը պարտավոր է իր աշխատանքային և պաշտոնեական պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում

չօգտագործել այնպիսի տեղեկություններ, որոնք, թեև ենթակա են հրապարակման, սակայն դեռևս չեն հրապարակվել հանրային իշխանության տվյալ մարմնի կողմից:
6. Աշխատակիցը պարտավոր է չհրապարակել օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության տվյալները, հարցազրույցների ընթացքում դրա հետ կապված հարցադրումները կատարել՝ առանց ուղղակիորեն հղում կատարելու եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

## ԲԱԺԻՆ 12. ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԽԻՂՃ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

1. Աշխատակիցը պարտավոր է իր գործունեության համար տրամադրված հանրային ռեսուրսները և այլ գույքն օգտագործել միայն ծառայողական նպատակներով և խնայողաբար:
2. Աշխատակիցը պարտավոր է հանրային ռեսուրսները, այդ թվում՝ այլ հանրային ծառայողների աշխատաժամանակը, չօգտագործել սեփական շահերը բավարարելու կամ այլ անձնական նպատակներով:
3. Աշխատակիցը պարտավոր է իր աշխատաժամանակը չօգտագործել իր պաշտոնեական լիազորություններից դուրս այլ գործողություններ կատարելու համար, եթե կիրառելի նորմերին համապատասխան այլ բան չի համաձայնեցվել իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի հետ:

## ԲԱԺԻՆ 13. ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

1. Աշխատակիցը պարտավոր է իր պարտականություններն իրականացնելիս դրսևորել անաչառություն, զերծ մնալ խոսքով կամ վարքագծով կողմնակալություն ցուցաբերելուց, գործել այնպես, որ իր անկողմնակալության նկատմամբ անհարկի կասկած չհարուցվի կամ ողջամտորեն այդպիսի տպավորություն չստեղծի, չառաջնորդվել ենթադրություններով, հույզերով, անձնական վերաբերմունքով և այլ կողմնակի ազդեցությամբ: Հանրային ծառայողը պարտավոր է բացառել խտրական վերաբերմունքի դրսևորումը որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի նկատմամբ՝ կապված նրա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:
2. Աշխատակիցը պարտավոր է իր գործընկերների հետ հարաբերվելիս՝ մասնագիտական աջակցության, կարողությունների զարգացման, կատարողականի գնահատման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերություններից բխող այլ գործողություններում, ցուցաբերել հավասար վերաբերմունք:

## ԲԱԺԻՆ 14. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատակիցը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն, այդ թվում՝ հրապարակայնորեն, ինչպես նաև սոց. ցանցերում չարտահայտել իր քաղաքական տեսակետները, ձեռնպահ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել:
2. Աշխատակիցը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլնի, ներառում է հանրային իշխանության մարմինների տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ ցուցադրելը, ինչպես նաև իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնում որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:

3. Աշխատակիցը պարտավոր է իր պարտականությունները կատարելիս չկատարել քաղաքական շահը սպասարկող քայլեր կամ ներգրավվել դրանց պաշտպանության մեջ, չկատարել նման գործունեության համար հանրային միջոցներ տրամադրելու պահանջները, ինչպես նաև նման պահանջներ չներկայացնել այլ հանրային ծառայողների:

## ԲԱԺԻՆ 15. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1. Աշխատակիցը պարտավոր է իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին կամ իր նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձին կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի առերևույթ բախման իրավիճակների, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, Օրենքով սահմանված հայտարարագրման կանոնների առերևույթ խախտման, այլ վնասակար գործողությունների, հանրային շահին ուղղված վնասի կամ էական գործառնական սխալների մասին:
2. Աշխատակիցը պարտավոր է պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հաղորդում ներկայացնել իր կամ իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից թույլ տրված առերևույթ խախտումների, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնաբերված այլ խախտումների վերաբերյալ: Իր կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ հանրային ծառայողը հաղորդում է ներկայացնում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին, իսկ իր վերադաս անձի կամ անմիջական ղեկավարի կողմից թույլ տրված առերևույթ խախտումների վերաբերյալ՝ վերջիններիս վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին:
3. Աշխատակիցը պարտավոր է վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել իր գործառույթներով պայմանավորված՝ երրորդ անձանց կողմից ցանկացած օգուտ կամ առավելություն տալու առաջարկի բոլոր դեպքերի վերաբերյալ:
4. Աշխատակիցը պարտավոր է հարգալից վերաբերմունք դրսևորել խախտումների մասին հաղորդում ներկայացրած հանրային ծառայողների և այլ անձանց նկատմամբ:

## ԲԱԺԻՆ 16. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Աշխատակիցը պետք է իր աշխատանքի որակը բարձրացնելու նպատակով բաց լինի նորարարական գործելակերպի նկատմամբ, շարունակաբար դիտարկի իր ոլորտին վերաբերելի ազգային ու միջազգային լավ գործելակերպը, հետևի միջազգային և տարածաշրջանային զարգացումներին, ինչպես նաև փորձի դրանք ներմուծել իր աշխատանքում՝ որպես կիրառման ենթակա հնարավոր պրակտիկա:
2. Աշխատակիցը պետք է ջանքեր գործադրի իր գործունեության ոլորտին վերաբերելի առկա մարտահրավերները վեր հանելու և դրանց հաղթահարման ուղիներ գտնելու ուղղությամբ՝ մյուս հանրային ծառայողների, հանրային իշխանության այլ մարմինների, հանրային քննարկումների և հանրության հետ համագործակցության միջոցով:
3. Աշխատակիցը պետք է անհրաժեշտ աջակցություն ցուցաբերի գործընկերներին, իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում:
4. Աշխատակիցը պետք է անհրաժեշտության դեպքում գործընկերներին ներգրավի իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացում, նրանց թույլ տա արտահայտել այդ որոշումների վերաբերյալ իրենց կարծիքը, իսկ դրանց չհամաձայնելու դեպքում՝ հայտնի պատճառները:
5. Աշխատակիցը պետք է այլ կառույցում աշխատանքի անցնելու նպատակով աշխատանքից ազատվելու դեպքում աշխատանքից ազատման դիմումում նշում կատարի նոր աշխատավայրի վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այլ պաշտոնի է նշանակվում նույն կառույցում:

6. Աշխատակիցը պետք է գործադրի բոլոր հնարավոր ջանքերը պետական համակարգչային համակարգերը, սարքավորումները, ծրագրերը, ինչպես նաև իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնի տարածքներն անվտանգության հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու համար:
7. Աշխատակիցը պետք է խրախուսի կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների մասին հաղորդում ներկայացնելը և նման վարքագծով օրինակ ծառայի մյուս հանրային ծառայողների համար:
8. Աշխատակիցը պետք է քայլեր ձեռնարկի իրեն ենթակա ծառայողների կողմից կոռուպցիոն ռիսկեր պարունակող վարքագիծ թույլ չտալու նպատակով:
9. Աշխատակիցը պետք է ստեղծի աշխատանքային բարոյահոգեբանական բարենպաստ և առողջ միջավայր, որը կնպաստի ավելի արդյունավետ աշխատանքի իրականացմանը:
10. Աշխատակիցը պետք է բարեխղճորեն կատարի իր պարտականությունները որպես քաղաքացի, ներառյալ՝ բոլոր ֆինանսական պարտավորությունները, հատկապես՝ օրենսդրությամբ նախատեսված հարկերի, տուրքերի և կումուլյատիվ վճարումների գծով պարտավորությունները, պահպանի երթևեկության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ կանոնները:
11. Աշխատակիցը հանրային ծառայողների միջև մասնավոր ֆինանսական գործարքներ կնքվելու դեպքում պետք է հավաստիանա և ապահովի, որ իրենց մասնավոր գործարքների արդյունքում հանրային ծառայության հեղինակությունը և իրենց աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմինների աշխատանքները որևէ գործառնական կամ հեղինակության վնաս չեն կրի:

## ԿԻՐԱՐԿՈՒՄԸ

1. Սույն կանոնները հանդիսանում են ուղեցույց և կարող են լրամշակվել կամ տեղայնացվել ՏԻՄ-ի կողմից:
2. Աշխատակիցը նշանակվելով կամ ստանձնելով պաշտոնը, ծանոթանում է սույն կանոններին և ստորագրում համապատասխան ձևաթուղթը, որը կցվում է նրա անձնական գործին:
3. ՏԻՄ- ը ձևավորում է վարքագծի կանոններ և վերահսկման հանձնաժողով՝ բաղկացած ՏԻՄ պաշտոնյաներից, որը վերահսկում է կանոնների կատարումը, դիտարկում է կանոնների խախտման վերաբերյալ հաղորդումները և դեպքերը, ի գիտություն ընդունում աշխատակցի շահերի բախման հետ առնչվող հայտարարությունները, սահմանում և կիրառում է կանոնների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցներ:
4. Կանոնները հրապարակային են և հասանելի հանրության համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԳԱՎԱՌ (ԿԱՄՈ) համայնքի ֆիզիկական և իրավաբանական անձանց շարժական գույքի ավտոմեքենայի հարկի վերաբերյալ ավագանու արտոնություն

| NN | ՀՎՀՀ | Հարկ վճարողի ազգանունը,անունը | Հարկ վճարողի հասցեն | տեսակը | Համարանիշ | Գրանցման ամսաթիվը | Տույժը | Փոխանցման Հ/Հ | ՆՊԱ/ ՆԾԵԼ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| 1 | 2 | | 4 | 5 | 6 | 7 | 8 | 8 | |
| 1 | 14289108 | Ներսիսյան Մանվել Աղաբեկի | Ք. ԳԱՎԱՌ ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ. Տ 18 | Ա/Վ | **34CU425** | **08.12.2014** | 12130 | 900175101055 | 2020թ |
| 2 | **վիկսորտ** | Ներսիսյան Մանվել Աղաբեկի | Ք. ԳԱՎԱՌ ՍՈՎԽՈԶՆԻԿՆԵՐԻ Փ. Տ 19 | Ա/Վ | **34CU425** | **09.12.2014** | 3787 | 900175101055 | 2021թ |
| 3 | M0001298 | Հերգնյան Վարդուհի Սուրիկի | Ք. ԳԱՎԱՌ Ա ԶԱՏՈՒԹՅԱՆ Փ.34 Տ 11 | Ա/Վ | **35NZ112** | **06.11.2017** | 9737 | 900175101055 | 2020թ |
| 4 | M0002947 | Մուսոյան Վարդգես Ստեփանի | Ք. ԳԱՎԱՌ Ս, ՄԱԿՎԵՑՅԱՆՓ. Տ 12 | Ա/Վ | **88ML883** | **30,07,2012** | 7924 | 900175101055 | 2020թ |
| 5 | 14245466 | Մելքոնյան Գուրգեն Զավենի | Ք. ԳԱՎԱՌ ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ. Տ 4 | Ա/Վ | **34LQ208** | **20.11.2013** | 3342 | 900175101055 | 2020թ |
| 6 | M0004293 | Խաչատրյան Ռոբերտ Գևորգի | Ք. ԳԱՎԱՌ ԱՆԴՐԱՆԻԿԻ Փ. Շ 63 44 | Ա/Վ | **31XR001** | **07.03.2018** | 2359 | 900175101055 | 2020թ |
| 7 | M0004602 | Հակոբյան Արմեն Ռուբենի | Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Փ. Շ62 | Ա/Վ | **36DV263** | **07.03.2018** | 9405 | 900175101055 | 2020թ |
| 8 | 14287566 | Բուռնուչյան Արթուր Արտուշի | Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Փ.38 Շ 39 | Ա/Վ | **50RP050** | **11.06.2013** | 37668 | 900175101055 | 2020թ |
| 9 | 14383389 | Զիրոյան Ալբերտ Նորիկի | Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Փ.23 Շ 18 | Ա/Վ | **10SO148** | **11.01.2011** | 18556 | 900175101055 | 2020թ |
| 10 | M0002346 | Հայրապետյան Սևակ Արագի | Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՎԱՔԱՐԻ 1 Փ. Տ 1 | Ա/Վ | **29GG977** | **27.05.2016** | 76211 | 900175101055 | 2020թ |
| 11 | M0000145 | Պարոնիկյան հայկանդուխտ Զոհրաբի | Ք. ԳԱՎԱՌ ԲՈՇՆԱՂՅԱՆ Փ. Տ 34 | Ա/Վ | **79AA007** | **05.12.2017** | 41573 | 900175101055 | 2020թ |
| 12 | M0005788 | Բոզոյան Հովհաննես Գագիկի | Ք. ԳԱՎԱՌ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 1 Փ. Տ5 | Ա/Վ | **01MF777** | **04.02.2019** | 74401 | 900175101055 | 2020թ |
| 13 | M0003899 | Գևորգյան Հեղինե Գարեգինի | Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 3 Փ. 1 ՓԿՂ. Տ 21 | Ա/Վ | **35MD185** | **20.12.2016** | 10916 | 900175101055 | 2020թ |
| 14 | M0005855 | Ջանդոյան Վարդգես Հովհաննեսի | Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ Փ. Տ 54 | Ա/Վ | **35XM531** | **30.11.2018** | 33944 | 900175101055 | 2020թ |
| 15 | M0001343 | Խզմալյան Արսեն Հրանդի | Ք. ԳԱՎԱՌ ՕԳՈՍՏՈՍԻ 23 Փ. 1 ՓԿՂ. Տ 55 | Ա/Վ | **34DV842** | **08.05.2014** | 12680 | 900175101055 | 2020թ |
| 16 | 14523261 | Դաշտոյան Ռոբերտ Անուշավանի | Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ Փ. Տ 65 | Ա/Վ | **34CD688** | **25.11.2014** | 36209 | 900175101055 | 2020թ |
| 17 | **վիկսորտ** | Դաշտոյան Ռոբերտ Անուշավանի | Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ Փ. Տ 65 | Ա/Վ | **34CD688** | **25.11.2014** | 17517 | 900175101055 | 2020թ |

Տեղեկանք

ԳԱՎԱՌ (ԿԱՄՈ) համայնքի ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ գույքի վերաբերյալ ավագանու արտոնություն

| NN | Հարկ Վճարողի | Հարկ Վճարողի | ՀՎՀՀ Հողի | Հող Տույժ | Փոխանցման Հ/Հ | ՀՎՀՀ Շենքի | Շենք Տույժ | Փոխանցման Հ/Հ | Նպատակը նշել |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ազգանունը, Անունը | Հասցեն | | Տեսակը | | | Տեսակը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | 6 | 7 | | 8 |
| 1 | Շահրիկյան Միհրան Հակոբի | Ք,Գավառ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍ | 14465479 | **29418** | 900175101063 | | | | **2020թ,** |
| 3 | Աֆրիկյան Արամայիս Սերգոյի | Ք,Գավառ ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 16 | 14468493 | **17976** | 900175101063 | | | | **2020թ,** |
| 4 | Սրապիոնյան Խաչիկ Վոլոդյայի | Ք,Գավառ ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 17 | 14351936 | **27890** | 900175101063 | | | | **2020թ,** |
| 5 | Մովսեսյան Վոլոդյա Սուրամի | Ք,Գավառ ՀԱՑԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍ | M0003569 | **19645** | 900175101063 | | | | **2020թ,** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 59 | ԲԱԲԵՅԱՆ ՖԵՐԴԻՆԱՆԴ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 104 Տ | 14296747 | 4151 | | | 4151 |
| 60 | ԽՉՈՅԱՆ ՄԵԽԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, Վ. ԿԱՐԵՅԱՆ Փ. Տ 23 | 14459125 | 16339 | | | 16339 |
| 61 | ՂԱՐԲԻՆՅԱՆ ԱՄԱԼԻԿ ՄՈՒՇԵՂԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՎԻԳԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Փ., 7 Տ | 14454611 | 11998 | | | 11998 |
| 62 | ՂԱՐԲԻՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԻԿԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՎԻԳԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Փ., 7 Տ | 14454638 | 15802 | | | 15802 |
| 63 | ՂԱՐԲԻՆՅԱՆ ԳԱԳԻԿ ՍԱՄՎԵԼԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՎԻԳԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Փ., 7 Տ | M0150310 | 422 | | | 422 |
| 64 | ԿՌՈՅԱՆ ՍԵԴԱ ՎԱՂԱՐՇԱԿԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՏԵՐՅԱՆ Փ., 9/1 Տ | 14455665 | 12244 | | | 12244 |
| 65 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ԽՈՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՉՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓԿՂ., 6 Տ | 14448266 | 703 | | | 703 |
| 66 | ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՐԱՆՏ ԽՈՐԵՆԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՉՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓԿՂ., 6 Տ | M0150288 | 1681 | | | 1681 |
| 67 | ԿԱՏՎԱԼՅԱՆ ՌՈՄԻԿ ՀՐԱՉԻ | ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ. 10 ՓԿՂ., 8 Տ | | | M0150686 | 14845 | 14845 |
| 68 | ՄՆԵՅԱՆ ԳԱԳԻԿ ՍՈՒՐԻԿԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, Գ. ՂԱՐԲԻՆՅԱՆ Փ., 40 Տ | 14303997 | 15189 | 14303997 | 4503 | 19692 |
| 69 | ՂԱՆՈՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 98 Տ | 14450379 | 11966 | | | 11966 |
| 70 | ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՆՈՐԻԿԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., 5/1 Տ | 14447383 | 18923 | | | 18923 |
| 71 | ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇՈՏ ԳԵՈՐԳԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՄԱՇՏՈՑԻ Փ. Տ 4/1 | | | 14293019 | 24980 | 24980 |
| 72 | ՔՈԼՈՋՅԱՆ ՍՈՒՐԻԿ ՎԱՀԱՆԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՄԱՇՏՈՑԻ Փ. Տ 57 | 14296041 | 16530 | | | 16530 |
| 73 | ՔՈԼՈՋՅԱՆ ՎԱՀԱՆ ՍՈՒՐԻԿԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՄԱՇՏՈՑԻ Փ. Տ 57 | M0150543 | 4628 | | | 4628 |
| 74 | ՔՈԼՈՋՅԱՆ ԼՈՒՍԻԿ ՄՈՒՇԵՂԻ | ՍԱՐՈՒԽԱՆ, ՄԱՇՏՈՑԻ Փ., 52 Տ | 14449887 | 3747 | | | 3747 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 609899 | | 257948 | **867847** |

Սարուխան գյուղի վարչական ղեկավար՝ Լ. Աբրահամյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Նորատուս համայնքի ֆիզիկական և իրավաբանական անձանց շարժական գույքի ավտոմեքենայի հարկի վերաբերյալ ավագանու արտոնություն

| NN | ՀՎՀՀ | Հարկ վճարողի ազգանունը,անունը | Հարկ վճարողի հասցեն | տեսակը | Համարանիշ | Գրանցման ամսաթիվը | Տույժը | փոխանցման Հ/Հ | Նշումներ/ տարի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | M0330274 | Մեխակ Ստեփանյան | գ.Նորատուս ,3-րդ փողոց տ11 | փոխադրամիջոց | 34SV502 | 07.11.2012 | 10 776,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 2 | 14309676 | Համլետ Մխեյան | գ.Նորատուս,Սևանի 26 նրբ.տ 16 | փոխադրամիջոց | 34FM454 | 06.02.2015 | 22 590,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 3 | PS53B993C6 | Արարատ Մկրտչյան | գ.Նորատուս,Սևանի 14 նրբ. տ3 | փոխադրամիջոց | 88MV883 | 07.04.2016 | 6 631,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 4 | M0330447 | Արարատ Մկրտչյան | գ.Նորատուս,Սևանի 14 նրբ. տ4 | փոխադրամիջոց | 88MV884 | 08.04.2016 | 10 366,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 5 | 14492271 | Սասուն Անտոնյան | գ.Նորատուս, Վ.Մամիկոնյան 17 | փոխադրամիջոց | 34QD116 | 08.07.2015 | 5 055,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 6 | 14492271 | Սասուն Անտոնյան | գ.Նորատուս, Վ.Մամիկոնյան 17 | փոխադրամիջոց | 69XX900 | 08.05.2019 | 5 098,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 7 | M0330080 | Սասուն Պետրոսյան | գ.Նորատուս,Գործարանային փ.15 | փոխադրամիջոց | 07OC010 | 27.09.2016 | 88 401,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 8 | SEF6445FD4 | Գագիկ Ադամյան | գ.Նորատուս | փոխադրամիջոց | 72RU072 | 12.03.2019 | 24 354,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 9 | M0330815 | Գագիկ Ադամյան | գ.Նորատուս | փոխադրամիջոց | 72RU072 | 12.03.2019 | 49 073,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 10 | SE9BD656B4 | Նորիկ Ասոյան | գ.Նորատուս | փոխադրամիջոց | 60OD008 | 13.08.2018 | 12 750,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 11 | M0330144 | Վարանցով Մաթևյան | գ.Նորատուս, Պ.Սևակի փ. տ18 | փոխադրամիջոց | 35TF980 | 11.07.2018 | 34 894,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 12 | SEA7DDF61F | Անդրանիկ Հակոբյան | գ.Նորատուս,Սևանի 3 նրբ.տ2 | փոխադրամիջոց | 07UL700 | 30.11.2016 | 11 429,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 13 | 14434992 | Անդրանիկ Հակոբյան | գ.Նորատուս,Սևանի 3 նրբ.տ2 | փոխադրամիջոց | 07UL700 | 30.11.2016 | 134 658,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 14 | SE7C141EEE | Նորիկ Ասոյան | գ.Նորատուս | փոխադրամիջոց | 60OS008 | 20.09.2007 | 6 929,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 15 | 14320376 | Խաչիկ Ասատրյան | գ.Նորատուս | փոխադրամիջոց | 31LS222 | 17.01.2012 | 29 813,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 16 | SE21EBCDD1 | Նորիկ Ասոյան | գ.Նորատուս | փոխադրամիջոց | 77RF747 | 13.04.2015 | 4 734,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 17 | SE3482D25B | Վարանցով Մաթևյան | գ.Նորատուս, Պ.Սևակի փ. տ18 | փոխադրամիջոց | 35TF980 | 11.07.2018 | 10 997,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 18 | M0330128 | Մնոյան Գեղամ | գ.Նորատուս, Սևանի 16 նրբ տ3 | փոխադրամիջոց | 51FV051 | 17.01.2019 | 4 223,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 19 | SE68F8ABD1 | Արսեն Ջոհրաբյան | գ.Նորատուս, Սևանի 16 նրբ տ17 | փոխադրամիջոց | 77XN777 | 09.09.2019 | 13 811,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 20 | 14438676 | Արսեն Ջոհրաբյան | գ.Նորատուս, Սևանի 16 նրբ տ17 | փոխադրամիջոց | 77XN777 | 09.09.2019 | 16 871,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 21 | SE945FD34E | Արա Հակոբյան | գ.Նորատուս, Վ.Մամիկոնյան 12 | փոխադրամիջոց | 42AA555 | 01.08.2017 | 12 784,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 22 | 14437673 | Արա Հակոբյան | գ.Նորատուս, Վ.Մամիկոնյան 12 | փոխադրամիջոց | 42AA555 | 01.08.2017 | 18 136,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 23 | M0330369 | Նվեր Սիրականյան | գ.Նորատուս,2-րդ փ տ 20 | փոխադրամիջոց | 41NS777 | 27.08.2015 | 16 525,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 24 | M0330181 | Արման Բանդուրյան | գ.Նորատուս,Գր.Լուսավորչի փ .8 նրբ.տ3 | փոխադրամիջոց | 36OG014 | 22.10.2019 | 8 088,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 25 | M0330722 | Կարեն Մաթևյան | գ.Նորատուս,սևանի 2 նրբ. 1 փկղ. տ1 | փոխադրամիջոց | 36AM102 | 25.03.2019 | 12 921,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 26 | 14248139 | Աշխեն Սաղաթելյան | գ.Նորատուս,Գր.Լուսավորչի փ.10նրբ.տ3 | փոխադրամիջոց | 34VC993 | 25.09.2014 | 4 879,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 27 | 14246296 | Սերյոժա Բաբսեյան | գ.Նորատուս,Գործարանային փ.28 | փոխադրամիջոց | 69RD666 | 12.03.2013 | 6 211,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 28 | M0330396 | Մելանյա Մաստոյան | գ.Նորատուս,Սևանի 19 նրբ, տ8 | փոխադրամիջոց | 78NV078 | 15.06.2015 | 5 030,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 29 | SE126BC34D | Մեսրոպ Կարապետյան | գ.Նորատուս,Սարալանջի 8 | փոխադրամիջոց | 36SD824 | 10.02.2020 | 27 119,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 30 | M0330791 | Մեսրոպ Կարապետյան | գ.Նորատուս,Սարալանջի 8 | փոխադրամիջոց | 36SD824 | 10.02.2020 | 24 200,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 31 | SEE5AC2D18 | Գևորգ Գրիգորյան | գ.Նորատուս,Պ.Սևակի 4 | փոխադրամիջոց | 01OS700 | 25.09.2019 | 41 252,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 32 | 14318881 | Ամուր Ասոյան | գ.Նորատուս,Սևանի 26 նրբ.տ 37 | փոխադրամիջոց | 36NP174 | 04.10.2019 | 3 140,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 33 | 14318881 | Ամուր Ասոյան | գ.Նորատուս,Սևանի 26 նրբ.տ 37 | փոխադրամիջոց | 44ZZ909 | 06.11.2013 | 77 245,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 34 | PSFC7D8C34 | Ամուր Ասոյան | գ.Նորատուս,Սևանի 26 նրբ.տ 37 | փոխադրամիջոց | 36NP174 | 04.10.2019 | 1 846,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 35 | PS5E2BA9B7 | Ամուր Ասոյան | գ.Նորատուս,Սևանի 26 նրբ.տ 37 | փոխադրամիջոց | 34SM751 | 28.08.2013 | 2 052,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 36 | PSB69AAF87 | Ամուր Ասոյան | գ.Նորատուս,Սևանի 26 նրբ.տ 37 | փոխադրամիջոց | 44ZZ909 | 06.11.2013 | 17 955,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 37 | 14307422 | Արագի Մաթևյան | գ.Նորատուս,Գր.Լուսավորչի փ. տ.5 | փոխադրամիջոց | 35PX926 | 16.01.2018 | 14 258.0 Դ | 900175107052 | 2020թ. |
| 38 | SE52E839A2 | Սիրանույշ Անտոնյան | գ.Նորատուս Տերյան 4 փկղ. տ6 | փոխադրամիջոց | 78QQ078 | 25.01.2021 | 26 451,0 Դ | 900175107052 | 2021թ. |
| 39 | 14316036 | Իշխան Խաչատրյան | գ.Նորատուս,Խ.Ավետիսյան | փոխադրամիջոց | 77UL799 | 14.12.2004 | 5 070,0 Դ | 900175107052 | 2020թ. |
| | Ընդ | | | | | | **828 615,0 Դ** | | |

Վարչական ղեկավար՝ Ա.Գրիգորյան

Տեղեկանք

Նորատուս համայնքի ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ գույքի վերաբերյալ ավագանու արտոնություն

| NN | Հարկ Վճարողի | Հարկ Վճարողի | ՀՎՀՀ Հողի | Փոխանցման Հ/Հ | Հող Տույժ | ՀՎՀՀ Շենքի | Շենք Տույժ | Փոխանցման Հ/Հ | Նպատակը նշել |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ազգանունը, Անունը | Հասցեն | | | Տեսակը | | գումարը | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Ամուր Ասոյան | գ.Նորատուս,Սևանի 26 նրբ. տ 37 | 14318881 | 900175107060 | 12014 | | | | 2020թ. |
| 2 | Մառլեն Սարգսյան | գ.Նորատուս,Սևանի 2 նրբ. տ5 | 14313491 | 900175107060 | 7970 | 14313491 | 5934 | 900175107151 | 2020թ. |
| 4 | Գրիգոր Ավետիսյան | գ.Նորատուս, Գետափի 2 նրբ. տ 15 | 14315153 | 900175107060 | 16279 | 14315153 | 5366 | 900175107151 | 2020թ. |
| 6 | Սպարտակ Վարդանյան | գ.Նորատուս,Սևանի 28 նրբ. տ 5 | 14436758 | 900175107060 | 12655 | | | | 2020թ. |
| 7 | Մաղաքյան Բագրատ | գ.Նորատուս,Գ.Գրիգորյան փ 6 | 14313089 | 900175107060 | 6031 | | | | 2020թ. |
| 8 | Ֆրունզ Մանուկյան | գ.Նորատուս,Գր Լուսավորչի 69 | 14311368 | 900175107060 | 20894 | | | | 2020թ. |
| 9 | Մնացականյան Ատոմ | գ.Նորատուս,Սևանի 2 նրբ. տ9 | 14313699 | 900175107060 | 19372 | 14313699 | 7501 | 900175107151 | 2020թ. |
| | Ընդամենը | | | | 95215 | | 18801 | | |

Ընդամենը 114016

Վարչական ղեկավար Ա.Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ 1

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ

| Հ/Հ | Հարկ վճարողի Ազգանուն, անուն, հայրանուն | Հարկ վճարողի հաշվառման հասցե | Գույքի ՀՎՀՀ | Գույքի տեսակը | Համարանիշը | Գրանցման ամսաթիվ | Մայր գումար | Ընդամենը Տույժ | Վճարման հաշվեհամար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դանիելյան Արսեն Հրանտի | Կարմիրգյուղ, Հովհաննես Շիրազ 70 | M0270225 | Փոխադրա-միջոց | 33SP758 | 17.08.2012 | 0 | 7212 | 900175106054 |
| 2 | Նավոյան Աբրահամ Սարգսի | Կարմիրգյուղ, Սերգո Ավետիսյան Փ., 65 Տ, | M0270812 | Փոխադրա-միջոց | 36MV084<br>57ZT777 | 16-09-2019<br>06-11-2019 | 0 | 117598 | 900175106054 |
| 3 | Բնյան Չառլշ Հայկի | Կարմիրգյուղ, Ազատության Պ., 25 Տ, | M0270822 | Փոխադրա-միջոց | 63MM636 | 12-09-2019 | 0 | 24960 | 900175106054 |
| 4 | Արևշատյան Սուրիկ Վաղիկի | Կարմիրգյուղ, Հ. Շիրազի Փ., 66 Տ, | 14484274 | Փոխադրա-միջոց | 1OOO954 | 28-09-2008 | 0 | 35774 | 900175106054 |
| 5 | Հակոբյան Բորիկ Մուշեղի | Կարմիրգյուղ, Ազատության պողոտա 1 նրբ. 28/2 | 14372521 | Շինություն | | 01.08.2001 | 0 | 4742 | 900175106153 |
| ***Ընդամենը*** | | | | | | | ***0*** | ***190286** /մեկ հարյուր իննսուն հազար երկու հարյուր ութսունվեց/* | |

***Կարմիրգյուղի վարչական ղեկավար՝*** ***Ա. Հողաբաշյան***

ՏԵՂԵԿԱՆՔ 1

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ

| Հ/Հ | Հարկ վճարողի Ազգանուն, անուն, հայրանուն | Հարկ վճարողի հաշվառման հասցե | ՀՎՀՀ Հողի | Հողի մայր գումար | Ընդամենը Տույժ | Վճարման հաշվեհամար |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հակոբյան Բորիկ Մուշեղի | Կարմիրգյուղ, Ազատության Պողոտա 1 Նրբ. 28/2 Տ | 14372521 | 0 | 18315 | 900175106062 |
| 2 | Մխեյան Վանիկ Արշավիրի | Կարմիրգյուղ, Մ. Բաբաջանյան Փ 6 Տ, | 14489107 | 0 | 22913 | 900175106062 |
| 3 | Դանիելյան Հրանտ Կարապետի | Կարմիրգյուղ, Հ. Շիրազի Փ., 70 Տ, | 14486719 | 0 | 41211 | 900175106062 |
| 4 | Տոնոյան Մարգարիտ Գառնիկի | Կարմիրգյուղ, Պ. Սեվակի Փ., 55 Տ, | M0270066 | 0 | 10893 | 900175106062 |
| 5 | Գասպարյան Ռաֆիկ Հակոբի | Կարմիրգյուղ, Պարույր Սևակ Փ. 43 Տ. | 14486615 | 0 | 32344 | 900175106062 |
| 6 | Ենգոյան Հակոբ Թաթոսի | Կարմիրգյուղ, Գ. Նժդեհի Փ., 11 Տ, | 14370835 | 0 | 24202 | 900175106062 |
| 7 | Վարդանյան Երջանիկ Ռաֆիկի | Կարմիրգյուղ, Պարույր Սևակ Փ. 104 Տ | 14378347 | 0 | 57169 | 900175106062 |
| 8 | Նազարյան Թամար Սոսինի | Կարմիրգյուղ, Զոհրաբ Շհոյանի Փ., 152 Տ, | 14490526 | 0 | 16145 | 900175106062 |
| 9 | Ներսիսկյան Գվիդոն Խաչատուրի | Կարմիրգյուղ, Թումանյան Փ. 22 Տ. | 14490449 | 0 | 6989 | 900175106062 |
| 10 | Արևշատյան Վաղարշակ Գևորգի | Կարմիրգյուղ, Հ. Շիրազի Փ., 66 Տ, | 14369398 | 0 | 24803 | 900175106062 |
| ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | | | | ***0*** | ***254984** /երկու հարյուր հիսունչորս հազար ինը հարյուր ութսունչորս* | |

***Կարմիրգյուղի վարչական ղեկավար՝ Ա. Հոդաբաշյան***

| | Գանձակ գյուղի ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ գույքի հարկի վերաբերյալ ավագանու արտոնություն | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հարկ Վճարողի ազգանուն , անուն հայրանուն | Հարկ Վճարողի հասցեն | ՀՎՀՀ Հողի | հողի ապառք | Հող Տույժ | ՓոխանցմանՀ/Հ | Նպատակը նշել |
| hh | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Հախոյան Հրաչիկ | **Գ. Գանձակ** | 14326854 | 0 | **13652** | **900175102061** | **2020թ,** |
| 2 | Մովսիսյան Էդիկ Վոլոդյայի | **ԳԱՆՁԱԿ, Հ. ՊԱՐՈՆՅԱՆ Փ., 26 Տ,** | 14326657 | 0 | **13691** | **900175102061** | **2020թ,** |
| 3 | Անտոնյան Անդրուշ Երվանդի | **ԳԱՆՁԱԿ, ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ Փ. 1 ՆՐԲ. 1 ՓԿՂ., 1 Տ,** | 14326295 | 0 | **24078** | **900175102061** | **2020թ,** |
| 4 | Միսակյան Արմեն Միհրանի | **ԳԱՆՁԱԿ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ. 5 ՓԿՂ., 4 Տ,** | 14270316 | 0 | **32447** | **900175102061** | **2020թ,** |
| 5 | Մարգարյան Վաղինակ | **ԳԱՆՁԱԿ Պ. ԴՈՒՐՅԱՆ 2** | 14325302 | 0 | **20461** | **900175102061** | **2020թ,** |
| 6 | Սարիբեկյան Սիրուշ Թաթոսի | **ԳԱՆՁԱԿ, Պ. ԴՈՒՐՅԱՆ Փ., 2 Տ,** | 14440514 | 0 | **22591** | **900175102061** | **2020թ,** |
| 7 | Մարգարյան Գրիշա Գևորգի | **ԳԱՆՁԱԿ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 42 Տ,** | 14441749 | 0 | **25667** | **900175102061** | **2020թ,** |
| 8 | Խաչատրյան Պապին | **ԳԱՆՁԱԿ, Հ. ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 5** | 14439111 | 0 | **9105** | **900175102061** | **2020թ,** |
| 9 | Խաչատրյան Պայծառ | **Գ. Գանձակ** | **14329543** | **0** | **12702** | **900175102061** | **2020թ,** |
| 10 | Ավետիսյան Միհրան | **ԳԱՆՁԱԿ, ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ Փ. 1 ՆՐԲ., 10 Տ,** | **14326201** | **0** | 23107 | **900175102061** | **2020թ,** |
| 11 | Գալստյան Կարեն Գագիկի | **ԳԱՆՁԱԿ, ԿՈՄԻՏԱՍԻ Փ., 26 Տ,** | **14539175** | **0** | **4847** | **900175102061** | **2020թ,** |
| 12 | Օհանյան Յուրիկ Գվիդոնի | **ԳԱՆՁԱԿ, ԿՈՄԻՏԱՍԻ Փ., 4 Տ,** | **14273133** | **0** | **2689** | **900175102061** | **2020թ,** |
| 13 | Սաղաթելյան Շուշանիկ | **Գ. Գանձակ** | **14442097** | **0** | **9603** | **900175102061** | **2020թ,** |
| 14 | Սահակյան Եսթեր | **Գ. Գանձակ** | **14329149** | **0** | **22181** | **900175102061** | **2020թ,** |
| 15 | Հովհաննիսյան Արամ Օհանի | **ԳԱՆՁԱԿ, ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ Փ., 8 Տ,** | **14442123** | **0** | **10088** | **900175102061** | **2020թ,** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | Կիրակոսյան Մանյակ Եգորի | ԹԱՄԱՆՑԻՆԵՐԻ ՓՈՂՈՑ 8Բ | 14329002 | 0 | 16439 | 900175102061 | 2020թ, |
| 17 | Գևորգյան Ժորա Ավետիքի | ԳԱՆՁԱԿ, Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 38 | 14441842 | 0 | 9073 | 900175102061 | 2020թ, |
| 18 | Պետրոսյան Սերյոժա Գեղամի | ԳԱՆՁԱԿ, Պ. ԴՈՒՐՅԱՆ ՓՈՂՈՑ 13 | 14440951 | 0 | 13433 | 900175102061 | 2020թ, |
| 19 | Սիրականյան Գուրգեն | Գանձակ | 1444196 | 0 | 18292 | 900175102061 | 2020թ, |
| 20 | Թադևոսյան Աշոտ Գուրգենի | ԳԱՆՁԱԿ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ. 1 ՓԿՂ., 6 Տ, | 14328162 | 0 | 9873 | 900175102061 | 2020թ, |
| 21 | Հակոբյան Մարտիկ Արեստակեսի | Հ. ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ 20 | 14326923 | 0 | 9980 | 900175102061 | 2020թ, |
| 22 | Արեստակեսյան Ռուսլան Մարտիկի | ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԲԱԲԱՋԱՆՅԱՆ Փ., 38-39/1 Շ, 521 | 14525525 | 0 | 2857 | 900175102061 | 2020թ, |
| 23 | Խաչատրյան Գեղամ Ռաֆիկի | ԳԱՆՁԱԿ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ., 54 Տ, | 14438918 | 0 | 21039 | 900175102061 | 2020թ, |
| 24 | Ցավրյան Մանուշակ Սամվելի | ԳԱՆՁԱԿ, ԿՈՄԻՏԱՍԻ Փ., 22 Տ, | 14538388 | 0 | 6506 | 900175102061 | 2020թ, |
| 25 | Սարիբեկյան Կարեն Վ. | ԳԱՆՁԱԿ, ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Փ., 13 Տ, | 14538878 | 0 | 5938 | 900175102061 | 2020թ, |
| 26 | Խաչատրյան Վոլոդյա Վաղարշակի | Հ. ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 3 | 14442621 | 0 | 15607 | 900175102061 | 2020թ, |
| | | | | | 375946 | | |
| | | | ***ընդամենը*** | | 375951 | | |

Ընդամենը ավտոմեքենայի տույժ / երեք հարյուր յոթանասուն հինգ հազար ինն հարյուր քառասունվեց / հհ դրամ
28.02.2023թ.

Գանձակ գյուղի վարչական ղեկավար Հ. Հակոբյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

| Գանձակ գյուղի ֆիզիկական և իրավաբանական անձանց շարժական գույքի ավտոմեքենայի հարկի վերաբերյալ ավագանու արտոնություն | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| NN | ՀՎՀՀ | Հարկ վճարողի ազգանունը, անունը, հայրանունը | Հարկ վճարողի հասցեն | տեսակ | Համարանիշ | Գրանցման ամսաթիվը | մայր գումար | Տույժը | Փոխանցման Յ/Յ | նպատակը |
| 1 | 2 | | 4 | 5 | 6 | 7 | | 8 | 8 | |
| 1 | 14232481 | Մնացականյան Արթուր Միշայի | ԳԱՆՁԱԿ, ՅԵՆՐԻԿ ԱԲՐԱՅԱՄՅԱՆ Փ. 3 ՓԿՂ., 5 Տ, | ա/մ | 31LO425 | 13.06.2000 | 0 | 11370 | **900175102053** | 2020 |
| 2 | 14240033 | Յովհաննիսյան Յրազդան Միլիտոնի | ԳԱՆՁԱԿ, ԹՈՒՄԱՆՅԱՆ Փ. 1 ՆՐԲ., 6 Տ, | ա/մ | 34MU265 | 12.09.2013 | 0 | 2098 | **900175102053** | 2020 |
| 3 | 14443598 | Յունանյան Յամլետ Գրիշայի | պ | ա/մ | 34VC191 | 10.09.2014 | 0 | 2601 | **900175102053** | 2020 |
| 4 | 14257344 | Խաչատրյան Օլյա | ԳԱՆՁԱԿ, ՅԵՆՐԻԿ ԱԲՐԱՅԱՄՅԱՆ Փ. 1 ՓԿՂ., 6 Տ, | ա/մ | | 14.05.1986 | 0 | 43659 | **900175102053** | 2020 |
| 5 | 14265179 | Բալաբեկյան Միհրան Սերյոժայի | ԳԱՆՁԱԿ, ՄԱՐԱԼԱՆՋԻ Փ. 1 ՆՐԲ., 1 Տ, | ա/մ | 31LO301 | 27.11.1995 | 0 | 11645 | **900175102053** | 2020 |
| 6 | 14439833 | Սարգսյան Օնիկ Յրաչիկի | ԳԱՆՁԱԿ, ԻՍԱՅԱԿՅԱՆ Փ. Տ 11 | ա/մ | 34RM496 | 02.10.2015 | 0 | 6634 | **900175102053** | 2020 |
| | | | Ընդամենը | | | | 0 | 78007 | | |

28.02.2023թ.

Ընդամենը ավտոմեքենայի տույժ 78007 / յոթանասուն ութ հազար յոթ / հհ դրամ

Գանձակ գյուղի վարչական ղեկավար Յ. Յակոբյան